ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

06.10.2022թ. կնքված թիվ ԿԿ-ԲՄԾՁԲ-22/01 մետաղական կառույցների տեղադրման ծառայությունների ձեռքբերման
պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 18 .11.2022թ.

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և «Գոլդ Քոմպանի » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022 թվականի հոկտեմբերի 06-ին կնքված մետաղական կառույցների տեղադրման ծառայությունների ձեռքբերման թիվ ԿԿ-ԲՄԾՁԲ-22/01 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված պահանջները և Կոմիտեի գլխավոր քարտուղարի 07.11.2022թ. թիվ ՄԽ/12264-2022 գրությունը, ինչպես նաև Ընկերության 11.11.2022թ. թիվ ԿԿ-887/2022 գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրիը, 07.11.2022թ. թիվ ՄԽ/12264-2022 գրությունը և 11.11.2022թ. թիվ ԿԿ-887/2022 գրությունները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ 4.25 մետր բարձրություն ունեցող մետաղական կառույցների կոնստրուկցիաներում դարակաշարերի ավելացում և տեղադրման ծառայությունների ձեռքբերման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված պահանջները:

1.3 Պայմանագրի կատարման համար սահմանված ժամկետը երկարաձգել մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 20-ը:

1.3 Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2022թ.-ի դեկտեմբերի 20-ը:

1.4 Համաձայն հավելված 1-ի տեխնիկական բնութագրի ընդունել կատարած ծառայությունները:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	Գոլդ Քոմպանի ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Ավան 3-րդ փ 37 տ
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	բանկ՝ Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 19300629981500
ՀԿՀՀ 02534328	ՀԿՀՀ 01031568
Գլխավոր քարտուղար՝ Մ. Խաչատրյան	Տնօրեն՝ Հ. Առաքելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3
ԿԿ-ԲՄԾՁԲ-22/01 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	45221141/502	մետաղական կառույցների տեղադրման ծառայություններ	6000000	6000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար՝ _____ Մ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գոլդ Քոմպանի ՍՊԸ
ք. Երևան, Ավան 3-րդ փ 37 տ
բանկ՝ Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300629981500
ՀՎՀՀ 01031568

Տնօրեն _____ Հ. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.